ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Անահիտ Արմենի Սերոբյանի «Թուրքիայի «փափուկ ուժը» Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացված «Թուրքիայի «փափուկ ուժը» Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» թեմայով ատենախոսությունն արդիական գիտահետազոտական աշխատանք է, որի կարևորությունն ու պատմաքաղաքական նշանակությունը կասկած չի հարուցում: Ատենախոսության հեղինակին հաջողվել է փաստել, որ նշյալ ոլորտում գիտահետազոտական ուսումնասիրություններն առավել քան երբևէ արդիական են և պետք է արժանանան պատշաճ գիտական ուշադրության: Այս տեսանկյունից ատենախոսությունն արժեքավոր է, քանի որ անդրադառնում է ոչ միայն տարածաշրջանային քաղաքականության տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներին, այլև՝ դրանց գործնական դրսևորումներին՝ առանձնակի կարևորություն տալով Թուրքիայի «փափուկ ուժի» դերի վերլուծությանը Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականության համատեքստում:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական վերափոխումների, Թուրքիայի և Վրաստանի միջև հարաբերությունների խորացման, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության ու տնտեսական ինտեգրման գործընթացներում առաջացած նոր իրողություններով: Աշխատանքի մեջ ուսումնասիրված հարցերը կարևոր են ոչ միայն ակադեմիական, այլև կիրառական առումով՝ հաշվի առնելով Թուրքիայի «փափուկ ուժի» քաղաքականության աճող դերը եվրասիական տարածքում և դրա ազդեցությունը տարածաշրջանային այլ պետությունների արտաքին քաղաքականության ձևավորման վրա:

Ատենախոսությունը կառուցված է հստակ գիտական տրամաբանությամբ՝ ներառելով տեսական և գործնական վերլուծությունների փոխլրացվող համադրություն: Հետազոտության մեթոդաբանական հիմքում դրված են պատմաքաղաքական, քաղաքական-տնտեսական և քաղաքական-մշակութային մոտեցումները, ինչպես նաև համեմատական և վերլուծական մեթոդները, որոնք ապահովում են ուսումնասիրվող թեմայի ամբողջական ընկալումը:

Աշխատանքի առավելություններից մեկն այն է, որ հեղինակը Թուրքիա–Վրաստան հարաբերությունները դիտարկել է ոչ միայն երկկողմ, այլև տարածաշրջանային գործընթացների համատեքստում՝ այն վերլուծելով Ռուսաստանի, Իրանի և այլ տարածաշրջանային դերակատարների ազդեցության տեսանկյունից: Այսպիսի մոտեցումը թույլ է տվել առավել ամբողջական ընկալել տարածաշրջանային քաղաքական դինամիկայի և տարբեր ուժային կենտրոնների փոխազդեցությունը Վրաստանի արտաքին քաղաքականության վրա:

Գնահատելի է նաև հեղինակի որդեգրած համապարփակ տեսական-վերլուծական մոտեցումը, որի շրջանակում փորձ է արվել ներկայացնել Թուրքիայի ազդեցության տարբեր դրսևորումները՝ տնտեսական, մշակութային, կրթական և կրոնական հարթություններում: Նման բազմաշերտ և ինտեգրացված դիտարկումը վկայում է ատենախոսի կողմից թեմայի ընկալման խորության մասին, ինչը բարձրացնում է աշխատանքի ընդհանուր վերլուծական արժեքը և նպաստում է դրա հիմնավորվածությանը:

Ատենախոսության **առաջին գլխում՝** «Վրաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումները տարածաշրջանային զարգացումների համատեքստում», հեղինակն իրականացրել է Վրաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական և ռազմավարական հիմքերի համեմատական վերլուծություն: Այս գլխում վերջինսպ հատուկ ուշադրություն է դարձրել փափուկ ուժի գործիքների կիրառման տեսական հիմքերին, ինչպես նաև փոխգործակցության և ռազմավարական շահերի բախման հիմնախնդիրներին տարածաշրջանում:

Աշխատանքի **երկրորդ գլուխը՝** վերնագրված «Թուրքական գործոնը էներգետիկ և տրանսպորտային ոլորտներում Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ», նվիրված է Թուրքիայի դերի ուսումնասիրությանը Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման գործընթացում՝ հատկապես էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքային նախաձեռնությունների միջոցով: Հեղինակը ներկայացնում է թե ինչպես է Թուրքիան՝ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի, Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարի և Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղու միջոցով Վրաստանի համար վերածվել ոչ միայն տնտեսական գործընկերոջ, այլև տարածաշրջանային ազդեցիկ քաղաքական դերակատարի: Ատենախոսը անդրադրադառնում է նաև այն հարցին, թե ինչպես է Անկարան օգտագործում էներգետիկ համագործակցությունը՝ իր դիրքերը ամրապնդելու և Վրաստանի նկատմամբ ազդեցության մեխանիզմներ ձևավորելու նպատակով:

Աշխատանքի **երրորդ գլուխը՝** վերնագրված «Թուրքական գործոնը Վրաստանի ներքաղաքական գործընթացների համատեքստում», նվիրված է Թուրքիայի ազդեցությանը Վրաստանի ներքաղաքական դինամիկայի վրա: Հեղինակը նշում է, թե ինչպես է Թուրքիան օգտագործում քաղաքական, տնտեսական և մշակութային

գործիքներ, մասնավորապես Աջարիայի հարցում, որպես «փափուկ ուժի» մեխանիզմ՝ իր ազդեցությունն ամրապնդելու համար: Այս գլխում հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է Թուրքիայի արձագանքը Վրաստանի արտաքին քաղաքականության վերակողմնորոշմանը «Վարդերի հեղափոխությունից» հետո, ինչպես նաև 2012 թվականի իշխանափոխության հետևանքով երկկողմ հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները՝ ընդգրկելով քաղաքական շահերի, համագործակցության ձևաչափերի և տարածաշրջանային դերակատարման առանձնահատկությունները: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Թուրքիան Վրաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների վրա ազդեցություն գործելու նպատակով կիրառում է բազմաբնույթ գործիքակազմ, ներառյալ քաղաքական, տնտեսական, մշակութային և էներգետիկ միջոցներ, ինչը նպաստում է Վրաստանի արտաքին քաղաքականության ձևավորման վրա իր ազդեցության ամրապնդմանը, երկկողմ հարաբերությունների դինամիկայի վերահսկմանը և Հարավային Կովկասում իր ռազմավարական շահերի առաջխաղացմանը:

Աշխատանքը առանձնանում է աղբյուրների համալիր ուսումնասիրմամբ: Միևնույն ժամանակ այն հիմնականում հանդես է գալիս որպես փաստագրական ներկայացում՝ ունենալով տեղեկատվական արժեք, սակայն սահմանափակված լինելով գիտական վերլուծության խորությամբ և տեսական նորույթով:

Հրապարակային պաշտպանության ներկայացված աշխատանքում առկա են մի շարք թերություններ, մասնավորապես՝

1. Չնայած աշխատանքը նվիրված է Թուրքիայի «փափուկ ուժի» գործոնի վերլուծությանը Վրաստանի տարածաշրջանային գործընթացներում, այն միայն մասամբ է անդրադառնում նշված թեմային: Ատենախոսը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է թուրք-վրացական հարաբերությունների վրա՝ առավելապես տնտեսական, էներգետիկ և ենթակառուցվածքային նախագծերի ուսումնասիրության համատեքստում, ինչի արդյունքում, չնայած երկկողմ տնտեսական ծրագրերում առկա «փափուկ ուժի» դրսևորման որոշ տարրերի, հեղինակը փաստացի շեղվում է աշխատանքի հիմնական թեմայից, այն է՝ «փափուկ ուժի» գործոնի խորքային վերլուծությունից:

2. Ատենասխոսության մեջ գերակշռում են առավելապես նկարողագրական հատվածները՝ առանց հիմնավոր վիճակագրական և փաստական տվյալների վերլուծության, ինչը նվազեցնում է աշխատանքի գիտական արժեքը: Մասնավորապես, հեղինակը նշում է՝ *«Շատ թուրքեր ծագումով ադրբեջանական են: Խորհրդային Միության վերջից ի վեր թուրքերի եւ ադրբեջանցիների միջեւ ամուսնությունների թիվը գնալով ավելանում է: Էթնիկական առումով այս երկու ազգերը գրեթե նույնն են: Սա ճիշտ է այնքանով, որքանով ջնջվում են կրոնական*

տարբերությունները, քանի որ Թուրքիայի բնակչության 80%-ը սուննի է, իսկ Ադրբեջանի բնակչության 70%-ը շիա է» (էջ 70): Նշված կարծիքը հիմնավոր լինելու համար ցանկալի կլիներ, որ հեղինակը նշեր փաստացի տվյալներ և սկզբնաղբյուրներ: Եվս մեկ օրինակ՝ *«Տնտեսական առումով երկու երկրները փոխկապակցված են բազմաթիվ համաձայնագրերի միջոցով, որոնք թույլ են տալիս փոխանակումներ կատարել բոլոր ոլորտներում, սակայն էներգետիկ հատվածն ամենադինամիկն է: Մի շարք թուրքական ընկերություններ ներդրումներ են կատարում Ադրբեջանում, սակայն Բաքու-Թբիլիսի- Ջեյհան նավթամուղը, կառուցվող մյուս խողովակաշարերը, Անդրանատոլիական գազատարը (TANAP) եւ Անդրադրիատիկ խողովակաշարը (TAP), ներկայացնում են այս երկու երկրների հարաբերությունների եւ նույնիսկ ապագայի բանալիները: Ավելին, բենզինից ստացված եկամուտները Ադրբեջանին թույլ են տվել զանգվածային ներդրումներ կատարել թուրքական տնտեսության մեջ»* (էջ 71): Հեղինակի կողմից նշված չեն բազմաթիվ երկկողմ համաձայնագրերը, որ թուրքական ընկերությունները ինչ ծավալի ներդրումներ են կատարում Ադրբեջանում, որ բիզնեսից որքան ստացած եկամուտներն են Ադրբեջանին թույլ տվել ինչ ծավալով ներդրումներ կատարել թուրքական տնտեսության և հատկապես որ ճյուղերում: Այսպիսի օրինակները բազմաթիվ են: Ավելին, 88-րդ էջում հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության, նշելով՝ *«Տարածաշրջանային ակտիվ քաղաքականության շնորհիվ Թուրքիային հաջողվել է սերտ տնտեսական հարաբերություններ հաստատել Վրաստանի հետ՝ միաժամանակ ուժեղացնելով իր դիրքերը վրացական տնտեսությունում: Թուրքիայի առեւտրատնտեսական սերտ հարաբերությունների եւ ակտիվ ներդրումային քաղաքականության արդյունքում Վրաստանը ներգրավվել է թուրքական ազդեցության ոլորտում: Թուրքիան վրացական տնտեսության նկատմամբ վերահսկողության լծակներ ունի»:* Այս և նման եզրակացություններն առանց հիմնավոր էմպիրիկ հիմքի և փաստական քանակական տվյալների վերլուծության բացասաբար են անդրադառնում ատենախոսության և այնտեղ տեղ գտած վերլուծությունների փաստարկման արժեանահավատության վրա: Նման օրինակները բազմաթիվ են:

3. Ատենախոսության որոշ հատվածներում նկատվում են գիտական անաչառության սկզբունքի խախտումներ, որոնք աշխատանքին հաղորդում են հրապարակախոսական, և ոչ գիտական հնչերանգ: Մասնավորապես, հեղինակի կողմից օգտագործվում են այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ *«Ռուսաստանը օկուպացրեց և ճանաչեց Աբխազիայի Հանրապետության և Հարավային Օսիայի անկախությունը», «Ռուսաստանի Ուկրաինա ներխուժում», «Հարավային Օսիայի եւ Աբխազիայի անջատողական շրջաններ»* (էջեր 28, 32, 36): Նման ձևակերպումների առկայությունը նվազեցնում է աշխատանքի գիտական օբյեկտիվությունը՝ այն տեղափոխելով հրապարակախոսական և ոչ ակադեմիական հարթություն:

4. Աշխատանքը պարունակում է մի շարք խմբագրական սխալներ և անճշտություններ: Որոշ դիտարկումներ երբեմն տարակուսանք են առաջացնում: Մասնավորապես, հեղինակը նշում է՝ *«Մինսկի խումբը, որը չէր ներառում Թուրքիան եւ առաքելություն ուներ նպաստելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ բանակցությունների առաջխաղացմանը, քիչ արդյունք գրանցեց ավելի քան քսան տարի սառեցված հակամարտությունում որեւէ էական բարելավման հասնելու համար»* (էջ 68): Ակնհայտ է և պատմաքաղաքագիտական փաստ, որ Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ էր: Կամ, օրինակ, *«Լեռնային Ղարաբաղում սառեցված հակամարտությունը մեծ ծանրաբեռնվածություն ունեն ներկայի վրա: Թուրքիան իսկապես ճանաչեց Հայաստանի անկախությունը խորհրդային ժամանակաշրջանի վերջում եւ մտածում էր Երեւանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին: Սակայն այս հարաբերությունները կարճ տեւեցին»* (էջ 71)*:* Զերծ մնալով մեկնաբանել ԼՂ սառեցված հակամարտություն ձևակերպումը, պետք է նշել, որ Թուրքիան ճանաչեց ՀՀ անկախությունը 1991թ. դեկտեմբերի 24-ին, երբ ԽՍՀՄ այլևս գոյություն չուներ և ՀՀ հռչակել էր իր անկախությունը: Մեկ այլ նման օրինակ, երբ հեղինակը նշում է՝ *«Նախագիծը* (խոսքը գնում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի մասին) *բացասական հետեւանքներ թողեց Ռուսաստանի Դաշնության համար. դա խաթարեց Ռուսաստանի ռազմավարական դիրքն այս տարածաշրջանում: Նախկինում գազն ու նավթը Եվրոպական միություն (ԵՄ) արտահանվում էին միայն Ռուսաստանից, սակայն նոր մրցակցի ի հայտ գալը գործնականում ոչնչացրեց ռուսական մենաշնորհը»* (էջ 85)*:* Այստեղ իհարկե ակնհայտ է, որ Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված համապատասխան զեկույցները այլ բան են փաստում՝ նշելով, որ ՌԴ ոչ միայն չկորցրեց իր առաջատարի դիրքը ԵՄ շուկա միայն նավթի արտահանման ծավալներով, որն ի դեպ կազմում էր 30-35%, այլ ՌԴ հաջորդող եռյակը Նորվեգիան էր, Սաուդյան Արաբիան և Լիբիան: Հետևաբար ԲԹՋ ազդեցությունը միանշանակ պետք չէ գերագնահատել: Ավելին, 90-րդ էջում ատենախոսը նշում է՝ *«Կասպից տարածաշրջանում ածխաջրածինների պաշարները համեմատելի են Հյուսիսային ծովի պաշարների հետ»:* Ակնհայտ է, որ Կասպից ծովի ածխաջրածնային պաշարները մոտ 2,5 անգամ գերազանցում են Հյուսիսային ծովի պաշարներին (աղբյուրներ՝ *UK Oil and Gas Authority (OGA), North Sea Oil & Gas Facts and Figures, Norwegian Petroleum Directorate (NPD), Facts 2024, BP Statistical Review of World Energy 2024).*

5. Հեղինակի մոտ նաև նկատվում է ենթագլուխների բովանդակային անհամապատասխանություն վերնագրին: Մասնավորապես, երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության գործիք»: Միևնույն ժամանակ ենթագլուխը մեծամասամբ նվիրված է Հարավային գազային միջանցքին, այնտեղով անցնող խողովակաշարերին, հաջողված և ձախողված գազամուղներին, որտեղ «փափուկ ուժի» բաղադրիչը հստակ ընդգծված չէ:

6. Ատենախոսության մեջ տեղ գտած մի շարք դրույթներ առկա աշխարհաքաղաքական իրողությունների համատեքստում արժանահավատություն չեն առաջացնում: Մասնավորապես 96-րդ էջում հեղինակը նշում է. *«Անդրանատոլիական գազատարով (TANAP) գազի պոտենցիալ արտահանողն Իրանն է, որն ունի զգալի պաշարներ եւ պատժամիջոցների վերացումից հետո ավելացրել է բնական գազի արդյունահանումը»:* Ինչպես և ինչ հանգամանքների դասավորման պարագայում Իրանը կարող է դառնալ նշված գազատարով գազի պոտենցիալ արտահանող, հեղինակը չի հստակեցնում, հաշվի առնելով հատկապես այն, որ ԻԻՀ նշված գազատարի մաս չի կազմում: Անդրանատոլիական գազատարը և առհասարակ Հարավային գազային միջանցքը բազմիցս արժանացել է իրանական կողմի քննադատությանը՝ այն համարվելով Իրանին և ՌԴ շրջանցող արևմտյան նախագիծ: Ավելին, ԻԻՀ շարունակում է կրել իր վրա պատժամիջոցների ծանր հետևանքները: Կցանկայանինք որպեսզի հեղինակը պարզաբաներ ինչ ի նկատի ունի ասելով *«պատժամիջոցների վերացումից հետո ավելացրել է բնական գազի արդյունահանումը»:* Մասնավորապես արդյո՞ք ԻԻՀ նկատմամբ սահմանված պատժամիջոցները վերացվել են, և եթե այո, ապա որքանով է ավելացել բնական գազի արդյունահանումը:

7. Ատենախոսության երրորդ գլուխը, որը թվում է որ առավել մանրամասն պետք է անդրադառնար «փափուկ ուժի» գործոնին և բացահայտեր նրա դերն Վրաստանի ներքաղաքական գործընթացներում, իրականում միայն մասամբ է անդրադառնում նշված թեմային: Ներկայացնելով Թուրքիայի ազդեցությունն Աջարիայում որպես «փափուկ ուժի» գործոն, ատենախոսը չի նշում փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին այդ ազդեցությունը, օրինակ՝ թուրքական ներդրումների ծավալը Աջարիայում: Փոխարենը, աշխատանքում բազմիցս կրկնվում է *«զգալի ներդրումներ»* ձևակերպումը, օրինակ՝ *«Թուրքական ընկերությունները զգալի ներդրումներ են կատարել Վրաստանում տարբեր ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, շինարարությունը, զբոսաշրջությունը եւ ֆինանսները»* (էջ 130): Նման օրինակները բազմաթիվ են: Ցանկալի կլիներ եթե հեղինակը փաստերով ներկայացներ այդ ներդրումները, դրանց դինամիկան ըստ տարիների և ոլորտների, ցույց տար «փափուկ ուժի» գործոնի կիրառման կոնկրետ դրսևորումներն ու հետևանքներ:

8. Սեղմագրի եզրակացության բաժնում հեղինակը ներկայացրել է մի շարք առաջարկություններ, ինչը բացակայում է ատենախոսության եզրակացություններ բաժնում:

Վերոնշյալ թերությունները ուղիղ ազդեցություն են ունեցել ատենախոսության գիտական արժեքի վրա՝ այն դարձնելով թերի, իսկ թեման ոչ լիարժեքորեն բացահայտված: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև գիտական ազնվության և ակադեմիական անաչառության սկզբունքները, գտնում եմ, որ Անահիտ Արմենի Սերոբյանի՝ «Թուրքիայի «փափուկ ուժը» Վրաստանի տարածաշրջանային

ինտեգրման գործընթացներում» թեմայով ատենախոսությունը պահանջում է վերանայում և լրամշակում: Ատենախոսության վերանայումը հնարավորություն կտա այն դարձնել ամբողջական, փաստարկված և արժանահավատ գիտական աշխատանք, ինչը հետագայում թույլ կտա հեղինակին ներկայացնել լրամշակված աշխատանքը՝ հայցելու ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Քաղաքագիտության
ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ.՝ Կ.Գ. Խոջայան

Քաղաքական գիտությունների թեկնածու Կ. Խոջայանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար
բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Վ.Հովհաննիսյան

ք. Երևան
09.10.2025թ.